«ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնահատող հանձնաժողովի նիստի

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 08/02.06.21

ՀՋ-ԳՀ-ԿՍ-04-1/26.03.21-ԱՄ ծածկագրով կաուստիկ սոդայի
և
ՀՋ-ԳՀ-ԾԹ-04-3/26.03.21-ԱՄ ծածկագրով ծծմբական թթվի
գնանշման հարցումով գնման ընթացակարգերի կնքված պայմանագրերում
մատակարարման ժամկետի փոփոխություն կատարելու մասին

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում 02.06.2021թ. ժամը $10^{00}$ –ին:
Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Ա.Մնացականյան - ԳՏՏ-Գլխավոր ճարտարագետ
Հանձնաժողովի նախագահի տեղակալ
Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետի տեղակալ
Ս.Հակոբյան - ԿՏԱ-2 պետ
Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ
Գ.Քոչարյան - ԿՎԱ-ի պետ
Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Հանձնաժողովի քարտուղար՝
Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

1. Հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը՝
ՀՋ-ԳՀ-ԿՍ-04-1/26.03.21-ԱՄ ծածկագրով կաուստիկ սոդայի (տեխնիկական, հեղուկ վիճակում, կծու նատրիում ГОСТ 2263-79) 90տոննա 100% կոնցենտրացիայի հաշվարկով և ՀՋ-ԳՀ-ԾԹ-04-3/26.03.21-ԱՄ ծածկագրով ծծմբական թթվի (տեխնիկական ГОСТ 2184-74) 88 տոննա 100% կոնցենտրացիայի հաշվարկով գնանշման հարցումով գնման ընթացակարգերի կնքված պայմանագրերում մատակարարման ժամկետի փոփոխություն կատարելու մասին

Ընդունվել է որոշում. Կողմ՝7, դեմ՝0:

2.Քննարկում՝
2.1 «Յունիքիմ» ՍՊ ընկերությունը 2021թ. մայիսի 31-ին N74 մուտքագրված գրությամբ (կցվում է) տեղակացնում է, որ իրենց ընկերության և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ –ի միջև 23.04.2021թ. կնքված N23.04-2/58 և N23.04-3/59 պայմանագրերի համաձայն մինչև 28.05.2021թ. իրենք պետք է մատակարարեին 88տոննա ծծմբական թթու և 90տոննա կաուստիկ սոդա: 28.05.2021թ. դրությամբ մատակարարվել է 77,2 տոննա ծծմբական թթու և 53,453 տոննա կաուստիկ սոդա: Սակայն ապրանքների մնացած մասի (10,8 տ ծծմբական թթու և 36,547տ կաուստիկ սոդա) մատակարարումը նշված ժամկետում

հնարավոր չէ կատարել պայմանավորված ԻԻՀ-ում մաքսային ձևակերպումների օրենսդրական փոփոխություններով: Միաժամանակ խնդրում են երկարաձգել մատակարարման ժամկետը մինչև 30.06.2021թ., հաշվի առնելով նշված հանգամանքը:

2.2 Վերլուծելով մայիս ամսվա պատվիրված և արտադրված էլեկտրաէներգիայի քանակությունները հանձնաժողովը տվեց եզրակացություն, որ նման շարունակական աշխատանքնային գրաֆիկի դեպքում անհրաժեշտ նյութերի քանակությունները լրիվ կապահովեն կայանի բնականոն անխափան աշխատանքը և լիովին հնարավորություն կա ընդառաջելու «Յունիքիմ» ՍՊ ընկերության խնդրանքին՝ երկարաձգել ապրանքների մատակարարման ժամկետը:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

2.3 Քննարկելով ստեղծված իրավիճակը և հաշվի առնելով, որ «Յունիքիմ» ՍՊ Ընկերությունը փոխադարձ համագործակցության ընթացքում հանդիսանում է վստահելի գործընկեր, գնահատող հանձնաժողովը որոշեց.

3. «Յունիքիմ» ՍՊ և «ՀրազՋԷԿ» ԲԲ ընկերությունների միջև 23.04.2021թ. կնքված N23.04-2/58 և N23.04-3/59 պայմանագրերի մատակարարման ժամկետը՝ 28.05.2021թ. երկարաձգել մինչև 30.06.2021թ.

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Ա. Մնացականյան

Է. Մովսիսյան

Տ. Մարտիրոսյան

Ս. Հակոբյան

Լ. Մնացականյան

Գ. Քոչարյան

Ռ. Հակոբյան